

82 - 93
6 - 93

ՊՈ.ՐՍԿՈ.ԿՈ.Ն ՀԵՔԵԱ.ԹՆԵՐ

306

Ա.

ՄԱԻԿՆ ԵՒ ԿՈ.ՏՈՒՆ

Բ.

ՕՃԱՌԱՎԱՃԱՌԻ ՈՐԴԻՆ

Գ.

ԹԱԳ. ԳԱ.Ն.Զ ԳՏՆՈՂ ԽՈՐԱՍԱՆ-
ՑԻ ԳԻՒՂԱՑՈՒ ՊԱՅՄՈՒԹԻՒՆ

Դ.

ԹԱԳԱԼՈՐՆ ԵՒ ԶԿՆՈՐՍԸ

Թարգմ. Անգլերէնից

Ե. Վ. ԵՐԿԱՐ Ա. Կ. Ե Յ Ե Ա Ն Ա Ն

Տպարան Ա. Ամենափրկիչ Վանքի
Նոր—Զուղա

1 9 1 4

ԳՐԱԴԱՐԱՆ

82-93
Մ-93

ար

ՄՈՒԿՆ ԵՒ ԿԱՏՈՒՆ

1009
6669
2

Թուրք. Անգլերենից

Խ. Ա. ԵՐԵՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



1914

Տպարան Ա. Ամենափրկիչ Վանելի
Նոր - Զուլու

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԵՔԵԱԹՆ ԵՐ

ՄՈՒԿՆ ԵՒ ԿԱՏՈՒՆ

Եթէ խելօք և ուշիմ ես. Եկ և լոիր կատուի և մկան վէսլը: Ես այդ ճարտասանօրէն կը կարդամ քեզ համար և եթէ ըմբռնես դրան՝ մեծապէս կը զարմանաս: Ո՞վ ուսեալ և խելօք մտրդ, բարեհաճէ պատմել մեզ կատուի և մկան այդ զրոյցը, լաւ կարդա դրան, մի պարզ և ոլորուն ձայնով, այնպէս՝ իբրև թէ ամբիոնից կարդում լինես:

Երկնից նախասահմանութեամբ ժամանակով Պարսկաստանի Քերման քաղաքում ապրում էր վիշապանման մի կատու-մի հեռատես կատու, որ առիւծի նման էր ուստում. մի կատու հրապուրիչ տշքերով և երկայն բեղերով ուսուր ատամներով: Իր մարմինը թմբուկի նման էր և իր գեղեցիկ աղուամազը սամուրի մոլլթու նման: Ոչ ոք այս կատուի չափ երջանիկ էր, ոչ նորապսակ հարսլ, ոչ էլ իր շուրջը բոլորուած ժպտերես հիւրերի վրայ նայող ասպնջականը: Այս կատուն խառնւում էր այնպիսի բարեկամներէ մէջ, որոնք ու-

րախ լնկերներ էին կոմիսարի, բաժակի և
տան սրահի մերոցի և ճաշի սեղանի՝ երբ փըռ-
ւում էր: Մի օր գինու մառանը բաց տեսնելով
վազեց դրանում տեսնելու թէ կարող էր մի
մուկ բռնել՝ նա գողի ակս թագնուեց մի ջը-
ռայի յետեւ: Ալդ բոպէին պատահ ծակից դուրս
վազեց մի մուկ, շուտով մազլցեց ջռայի բե-
րանի վրայ ու մացնելով գլուխը նրա մէջ՝
այնքան ագահօրէն խմեց, որ հարբեց յետոյ
շատ տիմմարօրէն զլիսից դուրս էր տալիս,
երեւակայում էր իրեն իբրև քաջասիրտ և մի
սրոտող առիւծ: «Ո՞ւր է կատուն» աղազակեց
նա, «որ ես նրա զլուխը թռցնեմ»: Ես նրա
գլուխն այնպէս կթռցնեմ, որպէս թէ պատե-
րազմի դոշտի վրա լինէր: Իմ դիմաց մի կա-
տու աւելի վատաքախտ էր, քան որի իցէ մի
չուն, եթէ իմ ճանապարհին պատահէր: Քաջ
Ռոստամ: Զալի որդին, ես նրանց ներկայա-
ցուցիչն եմ լաւիտեան: Կատուն լսեց այս՝
բարկութեամբ ատամները կրծտելով: Մի ակըն-
թարթում ցատկելով բռնեց մկան իր ճան-
կերով, ատամներովն և ատաց, «ով մկնիկ, հի-
մա իմ գլուխը կը թռցնես»: Մուկը պատաս-
խանեց, «ես քո ծառան եմ, իմ մեղքը թռնի: Ես
հարբած էի, ես քո գերին եմ, մի գերի որի
ականջը ծակած է և ուսին լուծ է գրած»:

Կատուն պատասխանեց, «Մի քիչ՝ քիչ սուտ
ասա: Ալսպիսի ստախօս երբէք եղել է», ես
լսեցի այն բոլորն ինչ դու ասացիր և երդւում
եմ, որ դու կեանքովդ պիտի քաւես մեղքդ:
Ես քո կեանքը մի շան սատկած դիակից
աւելի քիչ կը գնահատեմք: Ալսպէս նա
սպանեց և կերաւ մկան: Բայց յետոյ շատ
տիրելով իր արածի վրայ, վազեց մզկիթը,
ջուր ածեց իր ձեռներին ու քսեց երեսներին,
այնպէս ինքն իրեն օծեց՝ ինչպէս տեսել էր
հաւատացեալներին անելիս ազօթքի որոշ ժա-
մերին: Յետոյ նա սկսեց արտաստնել գեղե-
ցիկ հէյէթը սուրբ գրքից Ալլահին ուղղուած
և կատարել իր խոստովանանքն այս կերպով:
«Ես զզացել եմ և կրկն չպիտի պատուատեմ
ատամներովս մի որ և է մկան մարմին, ով
մեծ ողորմած ու բազմաչարչար միակ տէրը,
իմ պարտքն է՝ զզալ ու ապաշխարել, Քոնը՝
ողորմել՝ քաւելու համար այս պղծող արիւնը:
Ո՞վ արարիշ, ես կը տամ երկու ման
լիգը) հայ ՚ինպաստ խեղմերի: Թողի իմ մեղ-
քը, պաղատում եմ քեզ՝ ով մեծ, ներող, տես
թէ ինչպէս ես վշտից ընկճուած պաղատում եմ
քեզ»: Նա այս այնքան լաճախ կրկնեց և այն-
պիսի զգացմունքով, որ մասնաւ թէ իսկապէս
ինքն անկեղծ էր և վերջապէս վշտից արտաս-

ուեց: Մի մկնիկ պատահաւոր ամբիոնի լեռնեն
էր եղել և լսելով կատուի ուխտն և որոշում-
աւորը շտափով տարաւ ուրախ՝ բայց զարդ ու
նալի լուրը միւս մկներին:

Նո շնչառապառ պատմեց թէ ինչպէս
կատուն եղել էր մի ճշմարիտ Մոռուլման,
ինչպէս որ ինքը տեսել էր մզկիթում. լուիս,
կոծելիս, հոռոշելիս ու վշտից ձեռները կր-
ցելիս ու տաելիս: «Չբարկանաս ով Արարիչ
աշխարհի, զանց արա իմ մեզը՝ սրովհետու
ևս մի մեծ լիմարի նման գոյթակղուել եմ»:
Մոռկը շարունակեց նկառագրել թէ ինչպէս
կատուն ունէր մի վարդարան—համարիչ և
որ իր հոգուց ցոլցնո՞ւմ էր ճշմարիտ զլա-
ցողի բարեալաշտութիւններ: Երբ որ մկները
լսեցին այս սրտայսզ լուրերը, նրանք սկսան
ուրախութիւն տնել մեծապէս ու զատրճա-
նալ: Եօթն ընտրեալ մկներ իւրաքանչիւրը
մի գիւղի գլխաւոր՝ ելան և փառք տուին
Ալլահին, որ վերջապէս կատուն ճշմարիտ
հաւատացեալների շարքի մէջ մտաւ: Անմի
չապէս պատրաւմ ու աղաղակում էին, ունիւն, աչ,
հա, հառ, խմեցին կարմիր ու սպիտակ գինին
մինչեւ հարբեցան, երկուս հնչեցրին զանգտակ-
ներ և երկուոր բամբիւններ, երկուոր թմբուկ-

ներ զարկին և երկուոր երգեցին, մէկը չալկեց
լաւ լաւ բաներով լցուած մի մատուցարան,
այնպէս որ ամենքն ես կարող էին ուտել, ո-
մանք ծխում էին կլկակը (զալետն), մի ու-
թէշը խեղկատակի դեր էր կատարում, միւս-
ները նուտգում էին գանազան եղանակներ,
տարբեր երաժշտական գործիքների վրայ: Խըն-
ջուքից մի քանի օր լեռոյ մկների թագաւո-
րըն ասաց նրանց, ով բարեկամներ, ամեն մէ-
կը ձեւ զնից թաղ ըերի կատուին արժանի թան-
կագին ընծաներ»:

Ապա մկները ցրուեցին բնծաներ փրնտ-
ուելու, նրանք չուտով վերադարձոն իւրաքան-
չիւրը մինչի անգում ազնուականներին ներ-
կացացնելու արժանի մի բան բերելով: Մէկը
ըերեց մի շիշ գինի իր ձեռներով, միւսը մի
պնակ լիք չամչով, ուրիշներ եկան աղած նր-
շերով ու ձմել կի սերմերով, պանրի կոտրնե-
րով, շաքարիզանդի քասանտբաթներով, պիտ-
տակի միջուկով, սպիտակ շաքարի կոներով,
արմաւի պկաներով, բիւրեղացած շաքարի
նկանակներով, լունապներով, փլուով, լիմոնի
հոյզի շիշերով, Հնդկական շալերով, գլխարկ-
ներով ու վերարկուներով: Նրանք զգուշա-
թեամբ տարան իրենց նուէրները կատունների
թագաւորի տուած: Երբ հասան նրա տրքայա-

կան ներկայութեան՝ նրանք ցոլց տուին իրենց
խոնարհ հնագանդութիւնը, քսելով իրենց ձառ-
կատները գետնին բարեւելով նրան տառցին,
«ով տէր բոլորի կեանքի ազատարար, մենք
բերել ենք քո սպասին արժանի նուէրներ: Պա-
զատում ենք քեզ բարեհաճել ընդունել նը-
րանց»:

Կատուն տեսնելով մկներին, մտածեց ին-
քըն իրեն, «այս կերպով եմ վարձատրում բա-
րեպաշտ մուսուլմանութեանս համար, թէ-
պէտ ես շատ համբերեցի քաղցին, այսու սմե-
նայնիւ այսօր իմ պէտքը լի ու լի, առատօրէն
հոգացուած է, շատ օրեր են տնցել, որ ծոմս
կոտրած չեմ, դա պարզ է, որ Ալլահն այժմ
մեղմացել է: Նրանք՝ որոնք ճշմարտութեամբ
են ծառայում Սուտնուն, մինչեւ անգամ զըր-
կանքներին էլ հեշտութեամբ են դիմանում»:
Ապա դառնալով մկներին, հրամայեց նրանց,
որ մի քանի քայլ ամենքն մօտ գան, անուա-
նելով նրանց սիրելի բարեկամներ: Եւ նրանք
գնացին տռաջ կամազափի տերեների նման
գողգողալով, նրանք այնքան էին վախենում,
որ չէին իմանում թէ ինչ անեն: Երբ նրանք
մօտեցան, կատուն մի յանկարծակի սստումով
ցատկեց նրանց վրալ, որպէս մի քաջ մարտիկ
պատերազմի դաշտում: Կա հինգ մուկ բռնեց

իւրաքանչիւրը մի-մի գիւղի ու էս, երկուսն իր
առաջին թաթելով, երկուսը յետին՝ և մէկը
բերնով:

Մնացած մկները հազիւ կարողացան փըր-
կել իրենց կեանքը փախչելով: Վերցնելով մէ-
կըն իրենց մեռած եղբայրներից՝ շտապով տա-
րան տիսուր լուրը մկներին ազադակելով, «Էլ
ինչու էք նստել, ով մկներ, փոշի շաղ տուեք
ձեր գլխներին՝ ով երիտասարդներ, որովհետեւ
անգութ կատուն բռնեց հինգը մեր անմեղ
ընկերներից իր ատամներով և ճանկերով ու
նրանց սպանեց»: Ապա հինգ օրուայ ժամա-
նակամիջոցում նրանք պատրաստեցին իրենց
շորերն որպէս սպաս որներ և փոշի ցանելով
իրենց գլխներին ասում էին, «Մենք կը գը-
նանք և մեր թագուարին կըպատմենք բոլորն
ինչոր պատահել է մկներին, մենք չ'պէտք է
թերառնանք նրան պատմել ոյս ազէտը: Սրա
վրայ նրանք վերկացան և գնացին իրենց ճան-
քեն՝ խորին վշտով, մէկը զարնելով պատառ-
տած թմբուկը, մէկն ընդհատ-ընդհատ հը-
չեցնելով զանգակը, բոլորը շալեր էին ձգել
իրենց վզերով, իրենց արտասունքները փոք-
րիկ վտակների պէս հսում էին իրենց բեղերն
՚ի վայր: Թագուարն անմիջապէս իր գահի
վրայ բազմեց, մկները խոնարհութիւն ցոլց

տալուց յետով, ասացին «ով դու թագաւոր աշխարհի, մենք գերիներ ենք և դու մեծափառ Տէր, մենք հպատակներ ենք և դու Թագաւոր, ահա, տես կատուն մեզ հետ ինչպէս անդթօրէն վարուեց: Ահա տես, նրա մահմէդական դառնալու արդիւնքը: Իր կրօնափոխութիւնից առաջ նա սովորութիւն ունէր տարեկան միայն մէկը բռնելու մեզանից այժմ որ նա մի անկեղծ մուսուլման է, իր ախորժակն այնպէս է բացուել, որ հազիւ հինգը կը բաւականացնի նրան մի անդամուայ համար»: Թագաւորն այս լոելով այնպէս խիստ բարկացաւ, որ ինչպէս մի եռահազ կաթսալ լինէր: Բայց մկների պատգամաւորութեան հետ շատ քաղցրութեամբ խօսեց, կոչելով նրանց իր նորահաս և հաճելի հիւրեր, սփոփեց ու խսստացաւ որ նա կը տար կատուին այնպիսի պատիժ, որ դրա ձայնը աշխարհ տարածուէր: Յետոյ՝ նկատելով նրանց վիշտը, գթաց խեղճ մեռած մկան յօշոտուած դիակի վրայ և հրամալեց, որ պիտի թաղել դրան ամենայն շլքեղութեամբ ու պատուով: Հետեւ աբար նրանք ողբացին մի ամբողջ շաբաթ, այնպէս որ կարծես թէ դա մի թագաւորացն լինէր և պատրաստելով անուշահամ քաղցրեղէններ զամբիւների մէջ դրին և վտակացած աչքերով

տարան դէպի գերեզման: Թաղման պաշտամունքից յետով, նրանք յետ եկան թագաւորի մօտ: Ապա թագաւորը հրամայեց զօրաժողով անել որոշուած օրը մեծ աւազուտ դաշտի վըրաց, որ տարածուած է քաղաքի շուրջ՝ այնքան ընդարձակ՝ որքան աչք կարող է տեսնել: Երբ որ նրանք կիտուեցին մի տեղ՝ թագաւորը խօսքըն ուղղեց բազմութեանն այսպէս, «ով մարդիկ և զինուորներ, քանի որ կատուն այսպէս անգթօրէն է վարուել մեր հալրենակիցների հետ, նա լինելով մի հերիտիկոս և չարագործ վայրագ ընութ ունեցող, մենք պէտք է գընանք Քերման քաղաքի վրայ և կոիւ մզենք նրա դէմ»: Խոկոյն ՅՅՅ, մկներ յառաջ խաղացին զինուած որերով, հրացաններով և նիզակներով մեծ ու փոքր քաջաթռիչ դրօշներով զօրք զօրքի յետեից ձիաւոր ու հետեւակ: Մի անցորդ նօմադ, որ ճարպիկօրէն մի ձողով պահպանում էր իր հաւասարակշռութիւնը արագագնաց մի ուղտի քամակի վրայ, տեսաւ մեծ զօրքի շարժում նա այնքան ապշեց, որ բացականչեց, «Ալլահ օ Աքբար» («Աստծոյ մեծութիւն»), կորցնելով իր հաւասարակշռութիւնը վայր ընկաւ: Մկների մի քանի զօրախմբեր շարքերից դուրս էին եկել նրա ընկնելուց, բայց ոչինչ չ'ահաբեկեց նրանց, զօրքը բառաջ

իտաղաց: Երբ զօրքը շարուեց պատերազմական կարգով, թագաւորը կրկին խօսք ուղղեց նրանց տսելով, «ով երիտասարդներ, մի դեսպան ալէտք է ուղարկենք կատուին, կարսող մէկը, խոհական ու ճարտասան»։ Նրանք բոլորն աղաղակեցին, «թագաւորի հրամանը պիտի կատարուի»։ Մեր գլուխի վրայ, մեր կեանքը նրան է»։ Կար մի ուսեալ ու ճարտասան մուկ, մի նահանգի կառավարիչ, նա էր որին թագաւորը հրամայեց գնալ Քերման քաղաքի կատուի մօտ, որպէս գեսպան։ Գրեթէ իր անունը դեռ գուրս չէր եկել թագաւորի բերնից՝ ինքը գուրս ցատկեց իր տեղից և շարքից և ճանապարհորդելով արագօրէն ինչպէս անապատի քամի, նա գնաց անվեհեր կանգնեց կատուի աւագ և ասաց, «Որպէս մի դեսպան եմ գալիս մկների թագաւորի ներկայութիւնից», վայր խոնարհուելով տիրութեամբ և յազնածութեամբ։ «Իմացէք այս, որ իմ տէրը որոշած է պատերազմ մզել և նոյն իսկ գալիս է այժմ գլուխդ թուցնելու»։ Կատուն ի պատասխան որոտաց, «գնա՞ քո թագաւորին ասա թողի կրդկանք ուտի»։ Ես այս քաղաքից գուրս չեմ գլաւ, բացի իմ սիրո ուզած ժամանակներից»։

Յետոյ նա ուղարկեց պատգամաւորներ՝ բերել շուտով մի քանի կուռող և ոլսող կատու-

ներ Խօրասանից (Արևի երկրից) գէալի Քերման։ Հէնց որ կատուների զօրքը պատրաստուեց, կատուների թագաւորը նրանց արշաւելու հրաման տուեց, խոտանալով ինքն անձումբ և ո գնալ հետեւ եալ օրը պատերազմելու։ Կատուները ձիւարուեցին իւրաքանչիւրը մի սոված վագրի նման։ Մկներն էլ հեծան իրենց երիվարներ զինուած ստից ցզլուխ ու բարկութեամբ կրակուած։ «Ալլահ, Ալլահ» աղաղակելով զօրքերը միմեանց վրայ ընկան մերկացրած սրերով։ Այնքան կատուներ ու մկներ սպանուեցան, որ ձիերին ոտնատեղ չկար։ Կատուները քաջութեամբ կռուեցան, նրանք մոլեզնօրէն յարձակուեցին մկների առաջին շարքի միջով, ապա երկրորդի վրայ և բազմաթիւ էմիրներ ու գլխաւորներ սպանուեցին։ Մկները կարծելով որ իրենք լազմուեցին, գիմեցին ի փախուսա աղաղակելով, «Երիտասարդներ փոշի ձեր գլխին»։ Բայց յետոյ կրկին վերակազմուելով ճակատեցին և յարձակուեցան կատուների զօրքի աջ թեփ վրայ իրենց պատերազմական աղաղակներով, «Ալլահ, Ալլահ»։

Կռուի ամենատաք միջոցին մի հեծեալ մուկ նիզակով խոցեց կատուների թագաւորին, այնպէս որ գալիսած գետին փառւեց։ Նախ քան նրա տեղից բարձրանալը՝ մուկը ցատկեց

նրա վրայ և գերի բերեց թագաւորի մօտ: Ալուպէս այդ օրը կատուները լողիթուեցին ու արխութեամբ նահանջեցին դէպի Քերման քաղաքը:

Կատուին կապելով ալնքան ծեծեցին, որ մինչև ուշաթափուեց: Դաշտն արձագանք էր տալիս թժբուկների դըմբ-դմբոցից և ուրախութեան ազաղակներից: Մկների թագաւորը նստելով իր գահի վրայ հրամայեց նրանց որ կատուին բերեն իր առաջ: Երբ այս հրամանը կատարեցին, թագաւորն ասաց նրան, «Սրիկալ, ինչու ես կերել իմ հպատակներ, լսիր մկների թագաւորին»: Կատուն երկիւղից գլուխը կախեց ու լուռ մնաց նման նրանց, որոնք մահուան հրամար սուգ են անում: Մի քանի րոպէ միջոցից յետոյ ասաց նա «Ես քո ծառան եմ միշտ ի մահ»: Թագաւորը պատասխանեց, «Տարէք այս աներես շանը դէպի կախողնը: Ես անձտմբ կգամ տուանց ուշանալու դրան որպանելու ի վրէժինդրութիւն իմ ջարդուած հպատակների արեան»: Այսպէս նա հեծաւ իր փեղը և իր ոլահակը հպատաքորէն քաղլում էր իր տառջից: Կատուն որի երկու ձեռները միտոնին էին կապուած, կանգնած արտասւում էր: Կախաղանի մօտ հասնելիս, տեսնելով որ կատուն դեռ ես չէ պատմուած, թագաւորն առ

սաց կախողներին բարկութեամբ «ինչու գեռ ես այս բանտարկուածը կենդանի է. կախեցէք անմիջապէս դրան»:

Ճիշտ այդ բոպէին մի ձիաւոր քաղաքից եկաւ քառասմբակ և կատաղաբար ու տղաշեց թագաւորին տսելով, «Թո՞ղ այս թշուառական կատուին, ապազալում նա մեզ վիաս չի անիս: Ինչե իցէ, թագաւորը խուլ դարձաւ նրա ազերսները լսելու, հրամայեց իսկոյն կատուին սպանել: Մկները տատանուեցան թագաւորի հրամանը կատարել չկամենալու վախից: Այս աւելի բարկացրեց թագաւորին: «Ով յիմար մկներ», ազաղակեց նա, «գուք բոլորդ խղճում էք կատուին, որ կրկին նա իր կարգին զոհեր տանի ձեզանից»: Կատուն նրան տեսնելու պէս, իր քաջութիւնը վերադաւ մի սսահւոնվ նա ցատկեց իր տեղից ինչպէս անում է վագրը իր որսի վրայ, կըտրատեց իր կապերը և բռնեց հինգ անբախտ մկների: Միւս մկները սարսափով ու ահով լցուեցին, վայր ու վեր վազվակելով և վայրենարար «Ալլահ, Ալլահ» ազաղակելով, գնդահարեցէք նրան, գլուխը կարեցէք, ինչպէս Թօստամն արեց իր թշնամիներին պատերազմի օրերում: Մկների թագաւորը տեսնելով թէ ինչ պատահեց՝ ուշաթափուեց, որի

Վրայ կատուն գուրս նետուեց և խլեց իր թագը
ու չուշնը ձգելով իր գլխի վրայից, նրան
այնպէս կտխեց, որ նա անմիջապէս մեռաւ:
Յետոյ նա յարձակուեց ախտեղ ու այնտեղ,
բռնելով, սպանելով և ջնջելով մկներին, մին-
չե մկների ամբողջ բանակը խորտակուեց և
չ'թողնուեց մի հատիկ հակառակորդ իրեն:

Երկու բարեկամներ մի կարպետի վրայ
կարող են սիրով ննջել:

Երկու թագաւորներ մի թագաւորու-
թեան մէջ երբէք չեն կարող խաղաղութիւնը
պահպանել:

Մինչ աշխարհը պարտաւում է և փոքրիկ
երեխաները խաղում են, կատուներ մկների
վրայ պիտի միշտ իշխեն:



Մաշտ սուրբ քաղաքում, որի ուխտա-
տեղի գեղեցիկ մզկիթն իր ոսկեղէն գմբէթով
Պարսկաստանի թագաւորութեան պարծանքն
է, ժամանակով բնակւում էր մի աղքատ բայց
տղնիւ մարդ՝ Արքօլլահ անունով, որ խեղճու-
թեամբ օճառ վաճառելով տպրուստ էր հայ-
թայիթում։ Ամբողջ օր՝ արևածագից մինչև ա-
ռօցեմտոց նա թափառում էր քաղաքի մէջ ա-
ղջաղակելով, «ով եղբայրներ, զնեցէք իմ մա-
քուր օճառներից։ Այս քաղաքում աւելի լաւը
չկար, ինչպէս ամեն ոք իմանում է։ Մինչև
անգամ փոքրիկ մանկիկներն էլ այսպէս կ'ա-
սէին, սակայն եթէ խօսէին։ Բայց եթէ գուշ
մօտից նայէիք դրա օճառներին չէիք կարծի
որ օճառներ են, դրանք սե ու կոշտ էին աւե-
լի նման փալտի քան թէ որ եիցէ ուրիշ բա-
նի։ Եթէ որևէից անբախտ ուխտաւոր գործ-
ածէր դրանցից իր ձեռներ կամ երեսներ լուա-
նալու, գտ կայրէր նրա կաշին ինչպէս կրակ։

Բայց այս լաճախ չէր պատահում, որով-
հետեւ Պարսկաստանի ժողովուրդ շատ չի գոր-
ծածում օճառներից մարմնի մաքրութեան կամ
չորերի լուացքի համար, իսկ գոլով կերտկի

ամաններին ու կաթսաներին, սովորաբար աւազով են մաքրում: Ինչեայէ շատ օրեր անցան, բայց խեղճ Արդուլահն իրեն և իր փոքրիկ Ահմադ որդու համար հաց գնելու չափ բաւական չծախեց: Գիշեր որ լինում էր Արդուլահն տխրութեամբ սովորակում էր իր ցեխակրի թշուառ խղիկը և երեսները թաղում էր իր ձեռների ափերի մէջ որպէսզի չտեսնէր իր որդուն քաղցից արտառելիս:

Փոքրիկը որ տաս տարեկան էր՝ սփոփում էր հօրն տսելով, «Ենշալլահ» (եթէ Աստուած կամենալ) վազը կվաճառես աւելի օճառ, քան ինչ վաճառել ես վերջին մի քանի շաբաթների ընթացքում»: Հայրը նայելով իր որդու պայծառ, անմեզ երեսներին, քաջալերում էր ու ազօթում որ ալդակս լինէր, բայց երթալով բաներն աւելի և աւելի անյաջող եղան, երբ մի օր մի արկած պատահեց փոկիկ Ահմէդին:

Նա գպրոցի ճանապարհին գնալիս, երբ արել շատ տաքացաւ՝ ալտաստան փնտուեց գլխաւոր փողոցն ի վայր հոսող վտակի եզերքներում համահաւասար շարուած մեծ ծառերի տակ: Կանալք լցնում էին իրենց կժեր կամ շորեր լուանում, ուղտերի մի շարան խմում էին, մի քանի էշեր հետզհետէ թաւալուելով

զուարճանում էին ջրի մէջ ու մի քանի ներկարարնելի քամում էին նոր ներկուած զգեստեղններ՝ յօրինելով բազմագունի ալիքներ, որ հոսում անցնում էին: Յետոյ Ահմէդը կանգնեց նայելու մի գէրվիշի, որ առաջնորդում էր շզթալակապ մի սիրուն առիւծի: Ճիշտ տրոպէին մի քանի սուրհանդակիներ տարօրինակ գդակներով ու վերարկուներով քշեցին անցան ազաղակելով, «Ճանապարհ արէք արքալից, գտրձրէք ձեր երեսները գէպի պտտր»: Մեծ թագաւորը հեծել էր մի արաթական սիրուն նժոյգ շվապատուած զինուորներով: Յայտ այնտեղից անցաւ մի պատգարակ բարձուած չորս ջորիների վրայ:

Ճիշտ Ահմէդի գիմաց կանգնեց խումբը, պտտգարակից իջաւ շղարշով ծածկուած մի բամբիշ, Մաշտղի գեղեցիկ արծաթեալ գործեր զննելու որոշ ցանկութեամբ: Կափան նրա խանութ հասնելը՝ մի մեծ աղմուկ բարձրացաւ ժողովրդի մէջ: Առիւծը կտրել էր իր շըթան և գծորէն ցատկում էր այստեղ այնտեղ, պատուածելով ու տապալելով: Ժողովրդին գետնի վրայ:

Կանալք նուազեցին, մարդիկ փախան, փոկրիկ երեխաներն ել կանգնած լալիս էին աղիողորմ կերպով: Մի քանիսը նետուեցին վը-

տակի մէջ, խրտնած ձիերը գժաթքար վաղվզում
էին բոլորովին ահաբեկուած ու շփոթուած
ամբոխի մէջ։ Մի գոռումով առիւծը ցատկեց
իշխանուհու վրայ ու նրան գետին ձգեց
բայց նախ քան նրա իշխանուհուն կտոր
կտոր անելը, Ա.Հմէդը յառաջ ցատկեց դէպի
դարբնոցը, որտեղից բռնեց մի ծալրից հրաշէկ
երկաթեալ մի ձող ու կատաղաբար մղեց ա-
ռուծի բերնի մէջ, մի ցաւագին ճիչով ու զայ-
րացած թողեց իշխանուհուն ու ցատկեց բա-
զարներում, ուր մեծ վնաս արաւ։

Երբ իշխանուհին իր վախից սթափուեց՝
նշան արաւ Ա.Հմէդին մօտ գալ և բանալով
քողը նրան ասաց, «Դու մի փոքրիկ քաջ տր-
դայ ես» ու հրամալեց իր ծառաներին տալ նը-
րան մի քսակ ոսկի։

Ա.Հմէդն երբէք տեսած չէր ուկից ժամա-
նակ այսպիսի մի դեղեցկուհի, ուստի հիացմուն-
քից ինքըն իրեն կորցրեց, որը խմբին շնորհա-
կալութեան խօսքեր գտնելուց առաջ խումբն
արդէն անցաւ։ Երբ զրամը ծախսուեց, Ա.Հմէդն
ու իր հայրն սկսան չքաւորուել։ Մի հրեայ
փերեզակ ասաց նրանց թէ ինչպէս աւելի լաւ
առետուր կար մայրաքաղաքում, նրանք որո-
շեցին ճանապարհ ընկնել դէպի այդ քաղաքը՝
թէպէտ ճանապարհը երկար ու վտանգալից

էր։ «Սւելի լաւ է մեռնել անապատում քան
թէ մի մեծ քաղաքի մէջ», ասաց Ա.Հմէդը։
Մենք չենք կարող հետեւ ել փերիզակներին,
որոնք ամբողջ ժամանակ թափառում են եր-
բեմն մագլցում են լերան ոլոր-մոլոր ճանա-
պարհների միջով, երբեմն էլ անցնում են տաք
ու փոշոտ անապատով՝ ցաւած ոտներով ու գլ-
րիթէ մերձ ի մահ հոգնած, լաճախ քաղցած
ու ծարաւ մարդագով հուղկահարների ձեռք
ընկնելու մտածմունքով տանջուած, որոնք
դեգերում են պանդուխտների այս մեծ ճա-
նապարհի վրայ։

Սաստիկ տաքի ու դաժան հուղկահար-
ների պատճառով նրանք գիշերն էին ճանա-
պարհորդում։ Երկրի վրա լուսնի թողած ամեն
մի ստուերով նրանք մտածում էին, որ տեսան
մի հուղկահար իր մեծ ձիու վրայ։ Ցերեկնե-
րը նրանք քնում էին ճանապարհների կողքե-
րին գտնուած պանդոկներում ու Ա.Հմէդի փոք-
րիկ ծառալութիւնները, որ անում էր ջորե-
պաններին նրանք փոխարինում էին նրան մի
լիք բուռ բընձով կամ հացով կամ մի քիչ
չորացած պտուղներով, որ նրանց պահում,
էր անսուազութիւնից։

Մի գիշեր՝ երբ փնտուում էին կտ-
մուրջը, որ ձգուած էր աղի գետի վրայ, եր-

կինքը յանկարծ մթագնեց, անձրևը թափուեց հեղեղի պէս ու շուտով գետը լորդեց: Ոչինչ չկար անելու բացի նստել ու սպասել լուսնի ծագման: Կատաղի քամին հարուածեց նրանց, անձրևը թրջեց, նրանք կորցրին իրենց ճանապարհը և յանձնուեցին վայրենի գաղաների գթութեան:

Քամին մի լոպէ կտրուեց ու մթութեան միջից դուրս եկաւ հեծեծանքի ձախներ: «Մեռելի պէս լուսութիւն պահիլ՝ որդի», ասաց հայրը Ա.Հմէդին, «որովհետև դա անապատի ծերուկըն է»: Բայց Ա.Հմէդը տնապատի ծերուկի մասին երբէք լսած չլինելով, չվախեցաւ և արհամարհեց իր հօր զգուշութիւնը, նա վեր կացաւ ու գնաց այն ուղղութեամբ որտեղից եկան հեծեծանքների ձախներ: Հէնց որ հասաւ տեղը, լուսինը դուրս եկաւ ամպերի թմբի մի պուռնկից և Ա.Հմէդը տեսաւ մի խեղճ դէրփիշ աւտազի վրայ պառկած: Նա իր ուսերի վըրայ ձգած ունէր մի լինձառիւծի մորթի, իր կողքին ընկած էր սուր բևեռներով պատած մի մեծ փայտ, նա և դգումի չորացած կլեպից մի անօթ, որով նա ողորմութիւն էր հաւաքում:

Երբ որ տեսաւ Ա.Հմէդին՝ հառաջեց, «ի սէր Մարգարէին-օրի վրայ խաղաղութիւն լինի — տուր ինձ մի կաթիլ ջնւը»:

Ա.Հմէդը լցնելով իր փարչը գետից տուեց նրան խմելու, թէպէտ ջուրը մի փոքր աղի էր: Երբ որ դէրփիշը վերակենդանացաւ ասաց՝ «Ես դէրփիշ Ալին եմ, որ ճանաչուած եմ ամբողջ Պարսկաստանում, երկու ամիս առաջ ես Մազանդարանից դէպի Մաշտդ մեկնեցայ: Բայց երէկ ջերմը բռնեց ինձ: Ա.լս երրորդ անգամն է և ինչպէս գիտես միշտ ալեւտալի է, կաց ինձ մօտ, այն խաւար ժամերին, երբ ես կանցնեմ մահուան հովտի ստուերի միջով: Եւ երբ հոգիս կանցնի մահուան կամուրջով, վերցրու այս փոկրիկ կաշեալ քսակը պարանոցից կախարած ու դրանում դու կը գտնես մի փոկրիկ բիւրեղեալ բաժակ, եթէ շիտակ դործածես, կսատանաս դու մեծ, հզօր իշխանութիւն և հարաբութիւն: Իւրաքանչիւր առաւօտ երբ ելնես ածած մի կոթիլ զուլալ ջուր բաժակի մէջ և ուշագրութեամբ նալիք նրա մէջ և որևիցէ վտանգ եթէ սպառնայ քեզ, կամ նրանք որ մօտ և սիրելի են քեզ, դա կը ցոյց տայ քեզ: Եւ եթէ . . . », բայց այսակե ուժապառ եղաւ, իր գլուխը յետ ընկած ու անցաւ գնաց-մեռաւ: Ա.Հմէդը գտաւ քսակն ու գեղեցիկ բիւրեղեալ բաժակը, ճիշտ ինչպէս դէրփիշն ասել էր և վերադառնալով դէպի իր հալլը՝ նրան տսաց բոլոր պատահածը:

Մի քանի տռաւօտներ այս գէպքից յետոյ Ահմէդն արեց ինչ որ գէլրվիշը հրամայել էր իրեն, բայց բիւրեղի մէջ աչ ինչ չտեսնելով նա գործածութիւնը վերջացրեց: Վերջապէս մի օր եկաւ, երբ վրայ հասնել մի սոսկախ փոթորիկ: Աւ ազի ընդարձակ տարածութիւնից կատաղած քամին անցաւ երկինք և արև մըթագնեց օգը բեռնուորուեց քամատար փոշիով և քամու բերած փոքրիկ կոճերն ու քարերի բեկորներն այնպէս հարուածում կտրում էին նրանց, որ նրանք սկսան լաց լինել ցաւից: Ապաստան չկար: Ինչ զարմանալի է՝ եթէ նրանք իրենց վախից և նեղութիւնից վազեցին այստեղ ու այնտեղ և նոյնպէս էլ զարմանալի չէ որ մի քանի ժշշուառ ժամերից յետոյ երբ փոթորիկն անցաւ նրանք չէին կարող իրար տեսնել: Նրանք կորել էին գաժան անապատում. տռանց կերակուրի և գեռ և սաւելի վատ՝ տռանց ջրի: Յուսահատութեան մէջ հեծեծալով՝ Ահմէդը միշտ մաքառեց յառաջ: Նա գնում էր այնպէս ինչպէս մէկը երազում լինի: Երբեմն-երբեմն սայթաքելով ընկնում էր ժայռերի և մազառների վրայ, բայց նա մզւում էր գէպի յառաջ ու յառաջ: Ապա հասաւ ժամանակ որ նա այլևս չէր կարող գնալ ու նուազած պառկեց ցած:

Ինչքան երկար քնեց նա չիմացաւ, որովհետև նա արթնացաւ մի ուրիշից շարժուելով: Վեր նայելով նա տեսաւ մի ժպտուն ծերունի ասելիս, «Ահ փոքրիկ Ահմէդն է, օճառավաճառ Աբդոլլահի որդին: Զես ճանաչում ինձ Ահմէդ: Ես քո հօրեղբայրն եմ: Լաց մի լինի, որովհետև ճանապարհող կորցրել ես: Ե՛կ ձեռ քից բանիր և մենք շուտառվ կը գտնենք քո հօրը: Ահմէդը զարմանալով թէ ինչո՞ւ երբէք տեսած կամ լսած չէ իր հօր խօսելը մտսնաւորապէս այս հօրեղբօր մասին, բանեց ծերունու ձեռքն ու միասին յառաջ գնացին: Մզոն առ մզոն նրանք գընացին, բայց հօր հետքն անգամ չէին կարող գտնել: Յետոյ նա ողբալով ցած նստաւ ու տսաց «այնքան հոգնած եմ որ տիլեա չեմ կարող քայլել»: Եւ ծերունին էլ նստաւ: «Քնիր որդի» ասաց նա, ևս կը հսկեմ»: Հենց որ Ահմէդը փակեց իր աշքեր ծերունին յետ գտրածաւ՝ մէկ էլ Ահմէդը տեսաւ որ նրա ոտները փոխուել էին ոչխարի բարակ սրտնքների: «Պուլ զուլ», նա ճշաց և նուազեց: Ապա անապատի այս ճիւաղը սկսաւ բանալ Ահմէդի շորերն իր արիւնը ծծելու համար: Բայց տղայի ճիշին պատասխանեց մի ուրիշ ճիշ և ալնտեղ տեսարանի վրայ երևաց մի գեղեցիկ

երիտասարդ կին, ձեռքում բռնտծ մի ոսկեալ պարզաթեայ հատիկներով քառամտնեակ:

Հէնց՝ որ ծերունին մի ակնարկ նետեց համարիչներին, նա փոխաւ աւելի արագ քան յեռների վայրի ոչխարներ, որովհետև մետաղի տեսքը նրան դարձրեց վնասելու անզօր:

Ո՞վ ազատեց Ահմէդին: Ո՞չ ոք, բացի այն իշխանուհուց, որի կեանքը փրկեց Մաշագում: Թագաւորը՝ նրա հայրը՝ պատահեց որ ողդ ժամանակ ու խտագնացութիւնից վերագունում էր և իշխանուհին իր ծառաներին վախեցնելու համար ճանապարհից շեղուեց և այսպէս գտավ Ահմէդին: Իշխանուհու խնդրով Ահմէդն եղաւ թագաւորի հետեւ ողներից մէկը և իր հօր հետ միասին, որին նրանք հասան հետեւ օրը, ճանապարհորդեցին մայրաքաղաքը: Դազուինի մերձակալիքի լեռներում, որ մայրաքաղաքից գրեթէ երկու օրուայ ճանապարհ հեռու է՝ ապրում էր լեռների ծերունին կամ որպէս ճանաչուած է առհասարակ՝ մարդասպանների թագաւորը իր հետեւ ողներով. այնքան մեծ էր նրա ոյժը, որ քաւագան էր միայն մէկ խօսք առէր իր մարդկանց և նրանք կը ձգէին իրենք իրենց ժամանակի ձարերի առաջուելու և

կտոր-կտոր լինելու կամ իր հրամայելով նըրանք կը ճանպարհորդէին հեռու տշխարհի աւելի հեռաւոր մասեր ունէ մէկը սպանելու նպատակով, որքան էլ նրանք մեծ լինէին:

Երբ նա լսեց որ Պարսկաստանի թագաւորը մի բանակ էր կազմել ջնջելու իրեն էլ իր ցեղին էլ նա շատ բարկացաւ և ատաց իր հետեւ ողներից մէկին, «Գնա և աղատիր ինձ Պարսկաստանի թագաւորից», մարդն առաւ հաց, ջուր մի սուր դաշոյն ու գնաց: Ահմէդըն իր անապատի ծերուկից իր նեղ փախուատից յետոյ մասնաւոր հոգ տարաւ իւրաքանչիւր առաւօտ ածել մի կաթիլ ջուր բիւրեղեայ բաժակում և նալիւ նբանում: Ազինց չերեաց մինչու, մի առաւօտ նա տեսաւ ջրի կաթիւի մէշ մի երեսով՝ քնած թագաւորին, որի կողքին կանգնել էր մի հուզկահար վեր վերցրած դաշոյնով պատրաստ լարձակուելու: Աճապարելով թագաւորի մօտ, նա զգուշացրեց նրան վտանգից, բայց թագաւորը միայն խնդրաց, որովհետև վստահացած էր իր պահապանների վրայ: Ինչ և իցէ, Ահմէդը վլճուց հսկել: Մթութիւնն եկաւ և պահապանները ննջեցին: Պալատը լուռ էր: Ժամերը սահում էին ու Ահմէդը հոգնած շատ սպասելով, վերադառնալու էր՝ երբ նա տեսաւ մի

մութ ստուեր սողալիո գէպի պալատի այն
մասը, ուր թագաւորը քնել էր: Ստուերն ան-
ձայն շարունակեց իր ճանապարհը մինչև թա-
գաւորի սենեկի հենց շեմը, իսկոյն Ա.հմէդը
ցատկեց գրայ վրայ միևնորդ ժամանակ հաւաք
կանչելով: Ա.մբողջ պալատը արթնցաւ և մար-
դասանը բռնուեց: Լեռների ծերուկը տես-
նելով որ իր պատգամաւորը չվերադառնաւ,
ուղարկեց մի երկրորդը և ապա երրորդը և
վերջապէս իր հետևողներից ամենաճարպիկն
ու ամենայանդուգն ես, բայց փառք Ա.հմէդի
բիւրեղեալ բաժակին, բոլոր փորձերն թագա-
ւորի վրայ ոչնչացան: Թագաւորը մարդ ու-
ղարկեց Ա.հմէդին բերել տուեց ու ասաց «խընդ-
րի ինձանից ինչ որ ուզում ես»: «Ամեն մի ան-
դամով գողդղալիս» Ա.հմէդը պատասխանեց, ոչ
հարստութիւն, ոչ էլ իշխանութիւն ցանկա-
նում է ստրուկդ, տուր քո աղջկայ ձեռքը»:
Թագաւորն ասաց, «Եթէ ոիրում է քեզ թող
ալդ այդպէս լինի: Եւ քանի որ աղջկը սիրում
էր նրան սրտանց, նրանք ամուսնացան ու Ա.հ-
մէդն եղաւ թագաւորի Առաջին Մինիստր:

ԹԱԳԱՆՈՐՍԿԱՆ ԴԱՆԶ ԳՏՆՈՂ ԽՈՐԱ-
ՍԱՆՑԻ ԳԻՒՂԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Մի պատսպարուած հովտում, որ շըջա-
պատուած էր բլուրներով և որոնց պառեկ-
ները ծածկուած էին գեղձ, խաղող, թութ,
և ուրիշ համեղ պտուղների ծառերի պար-
տէզներով, տպրում էր մի գիւղացի Աբգոլ-
քէրիմ անունով, իր կին Զիբալի (գեղցկու-
հի) հետ միասին: Խսկապէս նա միշտ պարզ
տեսք ունէր: Բայց Զիբա կոչուած լինելով,
նա կարծում էր, որ իսկապէս ինքը գեղե-
ցիկ էր և այնպէս պատահեցաւ, որ բռնուած
ունայնասիրութիւնով, իր երկու որդիները կո-
չեց՝ տղան Եռևսուֆ (կամ Յովսէֆ) իր եղբար-
ների կողմից Եզիպտոսում վաճառուող Յովսէփի
անուան համեմատ (որը ինչպէս գիտէք փո-
խարքայ գարձաւ) և աղջկը Ֆաթիմա կոչեց,
Մահմադ մարգարէի սիրական աղջկայ ու
հուշակաւոր Ալիի կնոջ անուան համեմատ:

Աբգոլքերիմ երկրիս վրայ մի հողագործ
մարդ էր՝ վարձք չստանալով, վարձատրում էր
լոկ հացահատիկներով ու չորերով՝ իր ու իր
ընտանիքի պէտքերին բաւական: Փողի միայն

անունն էր լսել. Պատոհեց մի օր որ իր արքայն այնքան գոհ եղաւ իր գործից, որ նա խկապէս «տանը դռանի» մի պարզե տուեց:

Աբդոլ-Քերիմին ոա մի մեծ հարստութիւն երեաց և շիտկէ շիտակ իր օրարձակին վազեց իր կնոջ մօտն ու ասաց, «Նայիր, Զիրա, Հարստութիւն կայ քեզ համար, և ոփոեց փողերը նրա առաջ: Իր բարի կինը բերկրեցաւ՝ այնպէս և երեխաները, «Ինչպէս պիտի ծախսենք այս մեծ գումարը: Արբարը տուել է ինձ նաեւ մի օրուայ արձակուրդ, ուստի եթէ դուք չէք ներհակի, ես կերթամ Մաշադ հոչակաւոր քաղաքը, դա միայն քըսան մղոն հեռու է, այնտեղ երկու դռան սուրբ իմամի շիրմի վրայ դնելուց լետոյ, կայցելեմ բազարներ ու կրգնեմ ամեն բան քեզ և երեխաների համար ինչ ցանկանաք: «Ենորհ արա գնել ինձ համար մի մետաքսեալ կտոր նոր շրջազգեստի համար», ասաց կինը: «Բեր ինձ» ասաց փոքրիկ Եռուսութի, «մի սիրուն ձի ու մի թուր: «Եւ ինձ» ասաց փոքրիկ տղջիկը, «մի հնդկական թաշկինակ ու մի զուգ ոսկէ հողաթափ:» - «Ետա լաւ» ասաց հայրը, «դրանք այտեղ կը լինեն վաղ գիշերը», և մի մեծ փայտ առնելով ճանապարհ ընկաւ: Սարերից ցած դաշտ գալիս Աբդոլ-Քերիմը տեսաւ իր առաջ

տարածուած փառաւոր քաղաքը, հիացմունքով ինքն իրեն կորցրեց փայլուն գմբէթների աեսքից, որոնց կտուրները փայլում էին ոսկով ու նոյնպէս մինարէթների տեսքից, որոնց բարձրւնքից մօլաները ժողովրդին հրաւիրում էին աղօթքի: Շիրմի դարբանը հասնելիս հարցրեց մի մեծ մօլայի թէ կարող էր մտնել: «Ոյա, որդիկս», պատասխանեց, «գնա ներս և տուր ինչ կարող են շնորհել Մզկիթին և Սատուած կըփոխարինի քեզ: Աբդոլ-Քերիմը քայլեց մեծ գաւթի միջով: Ասիական քաղաքներից եկած հազարաւոր ուխտաւորների միջով: Բերանաբաց լափշտակուեց, շլացու տաճալի շքեղութեան, գոհարների, սիրուն գորգերի, մետաքսեղէնների, ոսկեղէն զարդարանքների վրայ, ապա նա երկիւղածօրէն դրեց իր երկու դռան փողը սուրբ գերեզմանի վրայ: Յետոյ փողոցների ամբոխի, աղմուկի, եռ ու գեռի միջով գնաց մինչև հասաւ բազարներ:

Մի տեղ նա տեսաւ մրգավաճառների, մի ուրիշում անօթագաճառների, յետոյ նա եկաւ գէպի գոհարավաճառներ, հացավաճառներ, մսագործներ, իւրաքանչիւրն ունէր իր սեփական տեղը բազարում և այսպէս շարունակեց՝ մինչև հասաւ այնտեղ՝ ուր վաճառում էին

միայն մետաքսեղեններ։ Մանելով խանութներից մէկում, խնդրեց տեսնել մի քանի մետաքսեղէններ։ շատ երկար ջոկջկելուց յետոյ ընտրեց մի ծիրանագոյն շքեղ մետաքսեալ կըտոր, ասեղնագործած եզերքներով ու գերազանց նկարներով։ «Ես կըվերցնեմ այս ասաց նա։ «Ի՞նչ է գինը»։ «Քանի որ դուք մի նոր յաճախորդ էք», ասաց խանութպանը, «միայն երկու հարիւր զռան կուզեմ։ ով էլ լինէր բացի ձեզանից՝ կվճարէր երեք կամ չորս հարիւր»։ Աբդոլ Քերիմը ապշած կրկնեց «Երկու . . . հարիւր . . . զռան, հաստատ կերպով դուք սխալում էք։ Այսպիսի զռաններ էք ասում» մէկը դուրս բերելով իր գրանից։ «Անշուշտ», ասաց խանութպանը, «և թոյլ տուէք տսել ձեզ, որ դա շատ չնշին է դրան որպէս գին։ «Խեղճ, խեղճ Զիրա» հառաջեց Աբդոլ Քերիմը, պատկերացնելով իր կնոջն ու փոքրիկներին յուսազրկուած։ «Ով է խեղճը» ասաց մետաքսավաճառը։ «Իմ կինը՝» ասաց Աբդոլ Քերիմը։ «Ես ի՞նչ գործ ունեմ քո կնոջ հետ» ասաց վաճառականը բարկանալով, որովհետեւ տեսաւ որ բոլոր նեղութիւնն ի զուր էր։ «լաւ, ես կասեմ քեզ բոլորը», ասաց Աբդոլ Քերիմը, «որովհետեւ ես լաւ գործեցի մեր գիւղի առբարի համար, ինձ տաս դռան տուեց։ (առաջին ան-

գամն էր որ ես փող ունեցալ) երկու զռանը գերեզմանին տալուց յետոյ, մտադրութիւն ունէի գնել մի մետաքսեալ կտոր կնոջս, մի ձի ու մի ժուր իմ փոքրիկ տղալ Եռւսուֆի համար ու մի հնդկական թաշկինակ և մի զոյտ սկեղէն հողաթափ փոքրիկ Ֆաթիմայի համար։ Եւ դու այստեղ ինձնից ուզում ես երկու հարիւր զռաններ մի կտոր մետաքսեղէնի համար։ Ինչպէս ես կը կարողանամ վճարել և գնել միւս բաներ»։

«Կորիր իմ խանութից», բարկտցած գուաց վաճառականը, «այստեղ ես վատնել եմ իմ ժամանակը և ճամփկել եմ գեղեցիկ մետաքսեղէնները քեզնման մի լիմարի համար։ Գնա առն քո Զիբայի ու տիմար երեխաններիդ մօտ . . . գնիր նրանց համար օթեկ բլիթներ և ուս շաքար և ոտքդ կրկին չգնես իմ խանութը, եթէ ոչ քեզ համար աւելի գէշ կը լինի։ Եւ նա դուրս արեց Աբդոլ Քերիմին իր հողաթափների բազմաթիւ հարուածներով, քշելով նըրան դէպի փողսց։ Յետոյ Աբդոլ Քերիմը գընաց ձիավաճառանոց ի հարկէ միայն տեսնելու որ ամենացած գնահաջատուած ձին կարժէր երկու հարիւր յիսուն զռան։ Այստեղ ձիավաճառանները ծաղքեցին նրան, երբ իմացան որ միայն ութ զռան ունէր և թելադրեցին

Նրան, որ կարող էր գնել մի իշու տառնվեց երբորդ մասը իր փոքրիկ տղին։ Գալով թրի մասին, նա տեսաւ որ գա արժէր առ նուազն երեսուն դռան, մինչդեռ ոսկեղէն հողաթափի դոյզը կը գնար մինչև մի քանի հարիւր զբուաններ ու մի հնդկական թաշկինակի գինը քսան դռան էր։

Լի տիրութեամբ խեղճ Ալբոլ Քերիմ թեքեց իր յոգնած քայլնը գէպի տուն։ Հանդիպելով ճանապարհին մի մուրտցկանի, որ տղաղակում էր «սիրելի բարեկամներ, մի բան տուեք ինձ, որովհետեւ վազը ուրբաթէ» (մոհմեգականաց կիրակին) նա որ տալիս է աղքատին Տիրոջն է փոխ տալիս և արդարի Տէրը կը հատուցանի հարիւրապատիկ։ «Դու միակ մարդն ես որ կարող եմ քեզ հետ զործ ունենալ, ասաց պարզամիտ Ալբոլ Քերիմը, «ահաւասիկ ութ զռան։ Դործ ածիր Աստծու պաշտամունքներին և մի մոռանայ ինձ յետ վճարել հարիւրապատիկ։ Խորամանկ մուրացկանը շատ զգուշութեամբ ծրաբեց ութ զըռան և խոստացաւ հաւատարմաբար վերադանել նրան մի քանի օրից հարիւր զռան։

Երբ Ալբոլ Քերիմն եկաւ իր խըճթի գիմաց, փոքրիկ Եռւսուփը որ ամբողջ օր սպասել էր՝ շնչառապու վազեց գիմաւորելու նը-

րան։ «Ուր է իմ ձին ու թուրը, հայրիկ» աղաղակեց նա։ Եւ Թաթիման, որ հենց գալիս էր աղաղակեց ևս իմ թաշկինակն ու ոսկեալ հողաթափները։ Զիրան էլ հարցրեց իր մետաքսեալ կտորի մասին։ Որովհետեւ ինեղն Ալբոլ Քերիմը շփոթուած էր երևում, մալրն տսաց «Հանդիսաւ եղէք, սիրելիներս, Զեր հայրը բոլորը չեն կտրողացել իր հետ բերել, նա բարձել է Եռւսուփի ձիու վրայ և բեռը յանձնել է մի ծառայի, որ անմիջապէս այստեղ կը լինի։»

Բայց երբ կինը լսեց իր մարդի պատմութիւնը և բոլորից վեր թէ ինչպէս նա տուել էր ութ զռան մուրացկանին, նա շատ բարկացաւ և գնաց արբաբին ասաց։ Ալբալն էլ աւելի ևս բարկացաւ տուելով, «Բնչ, դգում գլուխն ութ զռան տուեց մուրացկանին, զըրկեցէք նրան ինձ մօտ»։ Երբ Ալբոլ Քերիմն եկաւ նրա առաջ, նա ասաց լի քամահրանքով «դու քեզ մի մեծ մարդ ես երեւակայում, Արգոլ, երբէք ես մի պղինձ փողից աւելի տուած չեմ մուրացկանի, բայց Զերդ գերազանցութիւնը նրանց տալիս է արծաթ։ Առւրացկանը խոստացաւ, որ քեզ յետ կվճարի հարիւրապատիկ չէ. գէ սպասիր, որ յետ ստանաս։ Եւ տեսնելով Ալբոլին զուարթերես, նա ծի-

ծաղեց և ասաց, «բայց ոչ փողով, ալ հարուածով»: Եւ նրա ծառաները Աբդոլին ձըգեցին գետնի վրայ, նրան հարիւր փայտ տուին մերկ ոտների վրայ: Հետեւել առաւօտ արբաթը կըկին մարդ ուղարկեց Աբդոլի յեակից. նրան իմար անուանելով ասաց, «ես ունեմ մի սիրուն փոքրիկ գործ քեզ համար, Աբդոլ, այդ քեզ խելքի կըերի: «Դաշտ գնա՞ և փորիր գետինը ջուր գանելու համար, օր աւուր կը շարունակես մինչև գտնես»: Նատ օրեր Աբդոլը գործեց ալրող արեի տակ, մինչև նա փոսացրեց մերձ երեսուն ոտք մի խորութիւն և յետոյ նա հասաւ մի արոյրէ ամանի, գեղեցկօբէն շրջանակուած լիք սպիտակ կլոր քարելով, որ որոշակի շլացրեց իր աչքերը արեի ճառադայթների կատաղութեամբ: Աբդոլ Քերիմը մէկը գրեց բերան և փործեց կոտրել իր ատամներով բայց չէր կարողանում: «Ես գիտեմ ինչ է» քրքչաց ինքն իրեն, «Աբբաթը ցանել է մի քիչ բրինձ ու դրանց տեղ քար է բուսել»: Գուցէ գեռ էլ կան ու մի քանի ոտք աւելի ցած գալով՝ գտաւ մի ուրիշ անօթ լիք զանազան գոյնի սպաղան քարերով: Նոր նա կեր լիշեց, որ տեսել էր այս գեղեցիկ տպակութիւնը կտարների նման Մաշադում վաճառելիս և վճռեց որ առաջին պատեհանօթեամբ ինքը

կըկին կայցելէր քաղաքը հետը տանելով քարերը: Միւնոյն ժամանակ ծածկեց նրանց ու ոչինչ չասաց: Նա երկար չսպասեց մինչև արձակուրդը՝ որովհետև մի քիչ աւելի խորը՝ գտնելով ջուրը, իր արբաթն այնքան ուրախացաւ, որ տուեց նրան հանգստանալու մի լաւ հանգիստ, որին արժանացած էր և յետոյ Աբդոլը մեկնեց դեպի Մաշտակ: Նախքան քաղաք մտնելլ՝ նա գաղեց գանձի ամենամեծ մասը մի ծառի ներքեւ մի մեծ քարի տակ: Վերցնելով մի լիք գրպան, նա շիտակ գնաց այն խանութը, ուր տեսել էր այսպիսի քարեր: Խանութպանը նստել էր իր խանութի մուտքում, ծխելով հանդարտիկ իր զլզակը: «Ուզում էք գնել այս քարի նման քարեր», հարցրեց Աբդոլը մատնանիշ անելով մի արոյրէ մատուցարանի վլրալ գրուածներին: «Այս, ունիս մէկը», պատասխանեց վաճառականը, որովհետև Աբդոլը այնպիսի մարդ չէր երեսում որ մէկից աւելի ունենար հաւանականօրէն: «Ես առատ ունեմ», ասաց Աբդոլը, «մի գրպան լիք»: «Հաւանական է, որ գու մի լիք գրպան խիճեր ունենաս ասաց գոհարավաճառը: Բայց երբ Աբդոլը գուրս բերեց գրպանից մի լիք բուռ և ցոյց տըռեց նրան, նա այնքան ապշեց, որ հազիւ էր խօսում: Իր ամբողջ անդամներով գո-

զալով, պատուիրեց Աբգոլին սպասել մի ըսպէ ու թողնելով իր աշկերտին հոկողութիւնը՝ շտափաւ վերագարձաւ ստիկանտպետի հետ միասին։ «Ահա մարդը, ես անմեղ եմ», աղաղակեց զոհարավաճառը։ Նրա գրպանները լիքըն են մեծագին ագամանդներով, յակինթներով, զմբուխտներով ու մարգարիտներով։ «Անկանկած նու գտել է վաղուց կորոծ Կիւրոսի գտնձը»։ Ոստիկանապետը հրամայեց Աբգոլին խուզարկել, թանկագին քարերը նրա վրայից գտնուեցան և երբ նրանք բերին Զիբալին ու երեխաներին, ամբողջ ընտանիքը հինգ հարիւր զինուորների պահպանութեամբ բերուեցին մալրագաղաք։

Արդ, մինչ այս բաներն էին տեղի ունենում, թագաւորը իր երազում տեսաւ երեք անգամ սուրբ մարգարեին, որ նբան աչքերը սեռած նայելով բացագանձեց, «Աբգաս՝ իմ սիրելի բարեկամը պաշտպանիր»։ Երբորդ գիշեր թագաւորը քաջութիւն ունեցաւ և առաց մարգարեին, «Եւ ո՞վ է քո բարեկամը», պատասխանն եկաւ, «Նա մի խեղճ գիւղացի է Աբգոլ Քերիմ անունով, որն իր չքաւորութիւնից մէկ հինգերորդը տուեց Մաշագի շիրմին ու հիմայ, որովհետեւ նա գտել է թագաւորի գանձը, նրան կապկապել են ու բերում են

այս քաղաքը նրան նեղացնելու»։ Թագաւորը Աբգոլին լնդառաջ գնաց երեք օրու այ ճանապարհ։ Առաջ, առաջ եկան հարիւր ձիաւորներ, յետոյ խեղճ Աբգոլը նստած մի ուղտի վրայ իր պինդ կապկապած բազուկներով, ուղտի յետեւից արտասուելով քայլում էին երեխաներն ու իրենց մալրը։ Յետոյ եկան հետեւակ զինուորներ պահպանելով գանձը։ Թագաւորը չոքեցըն և սեկ իր ձեռքով արձակեց գաֆան կապանքները։ Աբգոլը, որի աչքերից հոսած արտասունքները՝ երեսներից վայր էին թափւում, չոքեց թագաւորի առաջ ու թախանձեց իր սիրելիների համար տսելով, «Եթէ գուք ինձ գերում էք, գոնէ թողէք այս անմեղներին ազատ»։

Թագաւորն այնպէս յուզուեց, որ վեցնելով Աբգոլին գետնից ասաց, «Ես գալիս եմ Ձեզ մեծարելու և ոչ թէ սպանելու։ Երբ դուք հանգստանաք, կարող էք վերագառնալ Ձեր սեփական նահանգը, ոչ որպէս կալանաւոր այլ որպէս այնտեղի նահանգապետ», ու ժպտելով թագաւորը՝ աւելացրեց, «Արդէն պատրաստ է մետաքսեալ շրջագգեստը Զիբալի համար։ Ճին ու թուրը ԵռևսուՓիդ ու հնդկական թաշկինակն ու ոսկեղին հողաթափները Թաթիմալիդ համար մոռացուած

չեն»։ Որովհետեւ թագաւորը կարդացել էր ոստիկանապետի գեկուցումի մէջ բոլոր մանրամասնութիւնները Աբգոյի խնդրի մասին, ուստի այնպէս եղաւ որ Աբգոյի ողորմութիւնն ու նույնը շիրմին՝ յետ վերադարձաւ ոչ թէ հարիւրապատիկ, այլ թէ աւելի քան իր դատարկագոյն երազներով էր տեսել։ Եւ շիրմը՝ և աղքատները սրանով մեծապէս օգտուեցան։

ԹԱԳԱՐԱԿՈՎ ՈՒ ԶԿՆՈՐՍԸ

Ժամանակով Եփրատ Տիգրիս մեծ գետերով, ուռոգուած երկրների վրայ իշխում էր մի թագաւոր, որ շափազանց մոլի էր ձկան։ Մի օր մինչ իր ամուսին Եիրինի հետ նստել էր թագաւորական պարտէզում, որ Տիգրիս պատուական գետի եզերքն իվայր տարածում էր, այն կէտը՝ ուր գետի վրայ նաւակներով մի հըրաշալի կամուրջ է քաշուած, նա տեսաւ մի ինչ որ նաւակ ջրի երեսին սահելիս, որի մէջ նստել էր մի ձկնորս ունենալով մի մեծ ձուկ։ Ձկնորսը նկատելով, որ թագաւորն իրեն էնայում և իմանալով որ թագաւորն ինչքան շատ է սիրում մասնաւորապէս այս տեսակ ձուկ, ձրկնորսը ցոյց տալու համար իր հնազանդութիւնը ճարպիկօրէն նաւակը բերելով եզերք, եկաւ թագաւորի առաջ ու խնդրեց եթէ կըհաճենար ընդունել դրան։ Թագաւորը մեծապէս ուրախացաւ, հրամայեց որ մի մեծ գումար փող տրուի ձկնորսին։ Նախքան ձկնորսի հեռանալը թագաւորի մօտից, թագուհին դառնալով գէպի թագաւորն՝ ասաց, «դու մի լիմար բան արիր»։ Թագաւորը շատ ապշեց ու հարցրեց թէ ինչպէս։ Նա պատասխանեց,

«Թուշածդ այնքան մեծ վարձատրութեան լու-
րը մի փոքրիկ ընծալի համար կը տարածուի
քաղաքում և այդ կը ճանաչուի որպէս ձկնոր-
սի նուեր։ Իւրաքանչիւր ձկնորս որ բռնում է
մի մեծ ձուկ կը բերի պալատը և եթէ այս
կերպ չվարձատրուի, դուրս կերթալ դժգոհ
ու մտքումը իր ընկերների շրջանում կը չա-
րախօսի։

Թագավորը պատասխանեց, «Եիրին, աշ-
քիս լոյս, դու ճշմարտութեամբ ես խօսում։
Բայց դու միթէ չես հասկանում թէ որքան
ստորութիւն է թագաւորի համար եթէ յետ
ստանար իր նուերը։ Ապա նկատելով, որ թա-
գուշին սիրայօժար էր տուարկել խնդրին, նա
սաստիկ զարացաւ և ասաց «ինդիրը փակ-
ուած է»։ Բայց այդ օրում՝ քիչ յետոյ, երբ
աւելի լաւ էր տրամադրուած, թագուշին
կրկին մօտեցաւ նրան և ասաց, որ եթէ այդ
էր իր միակ պատճառը՝ նուերը յետ չստա-
նալու, ինքը կը կարգադրէր այդ— այն էլ
այս կերպով։ «Դուք պէտք է կոչէք ձկնոր-
սին» ասաց նա, ու կհարցնէք նրունից՝ այս
ձուկը էք է, թէ որձ, եթէ նա ասի որձ
ասյա գու նրան կասես, որ ինքդ էք ձուկ
էիր ուզում, բայց եթէ նա ասի էք՝ քո պա-
տասխանը կը լինի, որ ինքդ ուզում էիր որձը»։

Այս կերպով մեր սեփականութիւնը ձեռք
կը բերուի մի բաւարար եղանակաւ։ Թագա-
ւորն ուրախացաւ այս հեշտ միջացի վրայ։
դժուարութիւնից դուրս գալու համար, հը-
րամայեց՝ ձկնորսին բերել իր առաջ։ Երբ
ձկնորսը, որ էր մի ամենառաջիմ մարդ, կանգ-
նեց թագաւորի առաջ, թագաւորն ասաց նը-
րան «ով ձկնորս, ասա ինձ, այս ձու կը մրձ է
թէ էգ»։ Ձկնորսը վեր նայելով պատասխա-
նեց, «ձկներին ոչ որձ են և ոչ էլ էգ», որի խե-
լօք պատասխանի վրայ թագաւորը ժպտեց և
թագուհուն աւելի զայրացնելու համար, հը-
րամայեց թագաւորական գանձապահին տալ
ձկնորսին փողի մի յուելը ուածական գումար
ևս։ Զգուշութեամբ դնելով փողերը իր կա-
շեալ քսակի մէջ, ձկնորսը շնորհակալութիւն
յալտնեց թագաւորին, թւեւեց քսակն ու ըշ-
տապեց հեռանալ, բայց ոչ այնքան արտգ,
որովհետև ինքը տեսաւ որ իր դրամներից
մէկն ընկաւ։ Գետնի վրայ դնելով քսակը, ծա-
ռից, վերցրեց գրամը և կրկին գնաց իր ճա-
նապարհը։ Այս բոլոր ժամանակը, թագաւորն
ու թագուհին դիտում էին իր ամեն մի գոր-
ծողութիւնը։ Եիրինը յետոյ լաղթականօրէն
բացագանցեց ևնալիր, ինչ մի ժաման է, ուն
իսկապէս նոռ ցած դրեց իր քսակը մի միայն

մի դրամ վերցնելու համար, որովհետև այն
միտքն է նեղացնում նրան, որ կարող է ընկ-
նել թագաւորի ծառաներից մէկի ձեռքը կամ
մի քանի աղքատների, որոնք դրան մեծ կա-
րօտով էին, որով հաց կը գտնէին ու թա-
գաւորին երկար կեանք կը մաղթէին։ Թագա-
ւորն զգալով այս բացտրութեան շիտակու-
թիւնը՝ կարողացաւ միայն պատասխանել,
«կրկին դու ճշմարիտ ես խօսում»։ Մի ան-
դամ ևս ձկնորսը բերուեց նրա առաջ։ Երբ
նա թագաւորի մօտ էր, թագաւորը խօսեց
դառնապէս, կոչելով նրան ժլատ և խստա-
սիրտ ու ասաց, «դու մի մարդ ես, թէ դա-
զան։ Թէպէտև ինչքան կարելի էր արի քեզ
առանց աշխատանքի հարստանալու՝ այնու-
ամենայնիւ ժլտութեան ոգին որ քո մէջն է
չէր թոլլատրում քեզ մինչև անդամ մի փոք-
րիկ դրամ թողնել ուրիշների համար»։ Եւ
ըիկ դրամ թողնել ուրիշների համար։ Եւ
թագաւորը հրամայեց նրան գուրու գնալ և
ալլես իր երեսը ցոլց չտալ քաղաքում։ Բայց
ձկնորսն ընկաւ իր ծնկներին և լաց եղաւ,
«Ասիր ինձ ով թագաւոր, աղքատների պաշտ-
պան, թող Աստուած երկար կեանք պարզեի
թագաւորին։ Ծառադ վերցրեց դրամը ոչ թէ
նրա արժէքի համար, այլ որովհետև դրամի
մի կողմ կրում էր Աստծու անունը ու միւսը

Թագաւորիդ կերպարանք։ Քո ծառադ վախե-
ցաւ որ մի գուցէ որևէ մէկը դրամը չտես-
նելով կը կսխոտէր տղմի մէջ ու այս կեր-
պով կաղտեղէր թէ Աստուծոյ անունը և թէ
թագաւորի դէմքը։ Թող թագաւորը դատի
եթէ ալսպէս անելով արժանացած եմ մեղա-
դրանքի։ Թագաւորը անչափ ուրախացաւ
այս պատասխանի վրայ և էլի տուեց նրան
մի մեծ գումար փող։ Իսկ թագուհու զարոյ-
թը անցաւ ու նո գթութեամբ նալեց ձըկ-
նորսի վրայ, որը մեկնեցաւ բեռնաւորուած
իր քսակով։



306


00000000

2013

ՀՅ Ազգային գրադարան



NL0004044



ԹԻՒՆ Ե ՅՈ ԱԾՎ